«Գ.Գ.Է. ՀՈՒԼԴԻՆԳ» ՍՊԸ-Ի տնօրեն

պարոն՝ Գ. Գևորգյանին

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Խուդյակովի 177/96
Էլ. փոստի հասցե՝ ggeholding@yandex.ru
Հեռ.՝ +374077666566

Տեղեկացնում եմ, որ «Լուսաբաց ճամբար» ՍՊԸ-ի և «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջև 30/06/2023թ-ին կնքված թիվ ԼՃԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերության կողմից պետք է մատակարարվեր սննդամթերք սկսած 01/07/2023թ-ից, սակայն մինչ օրս՝ 17/07/2023թ դրությամբ որևէ մատակարարում չի իրականացվել, ուստի հիմք ընդունելով 2.1.7 կետը «Լուսաբաց ճամբար» ՍՊԸ-ի կողմից Պայմանագիրը բոլոր չափաբաժինների մասով 17/07/2023թ-ին միակողմանի լուծվում է:

Ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լուսաբաց ճամբար» ՍՊԸ-ն վերոնշյալ ժամանակահատվածում պայմանագրի լուծումից հետո ստիպված է եղել այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է սննդամթերք պայմանագրով նախատեսվածի փոխարեն, ուստի «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն համաձայն Պայմանագրի 2.1.6 կետի պետք է հատուցի վնասները՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

«Լուսաբաց ճամբար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ավետիսյան

17/07/2023թ